Ընդունված է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի « » _ 2025թ.
Թիվ __ նիստում

Հաստատում եմ՝
Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ռեկտոր՝

հ.գ.դ., պրոֆ. _____ Ս.Ա.Սեդրակյան

/ /2025թ.

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի զարգացման ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2025-2030թթ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանն (այսուհետ՝ Համալսարան) իր կանոնադրական և հասարակական խնդիրների կենսագործման, ազգային և համամարդկային արժեքների ոգով ուսանողների դաստիարակության ուղղությամբ շարունակում է կրթության որակի բարելավման, սովորողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման և զարգացման ճանապարհը՝ ձգտելով դրանք առավելագույնս համապատասխանեցնել հասարակության և աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին:

Համալսարանն իր առաքելության իրականացման նպատակով առաջնորդվում է ռազմավարական պլանավորման, շահակիցների, աշխատաշուկայի կարիքների վերհանման, կրթական ծրագրերի կատարելագործման, ուսանողակենտրոն կրթության արմատավորման, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման, գնահատման գործիքակազմի զարգացման, պրոֆեսորադասախոսական(ՊԴ) կազմի գիտահետազոտական-ստեղծագործական գործունեության ծավալման և դրանում ուսումնառողների ներգրավման, մարդկային և նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, արտաքին կապերի ընդլայնման և ամրապնդման, հասարակական պատասխանատվության ստանձնման գիտակցմամբ:

Նախորդ՝ 2019-2024թթ. Ռազմավարական ծրագիրն այդ ուղղությամբ թեև արձանագրել է որոշակի ձեռքբերումներ, սակայն այն իրականացնելու համար դեռևս համալսարանի շահակիցները լիարժեք չէին ներգրավված ընթացող բարեփոխումներին: Դրա պատճառներից էին երկրի բնակչության հիմնական զանգվածի աղքատության, խիստ զբաղվածության ու դիմորդների անվճարունակության հետ, ինչը պահանջում է շարունակական հետևողական աշխատանք՝ հատկապես ռազմավարական պլանավորման հստակեցում:

Կարևորագույն խնդիրները շարունակում են մնալ գործող ՄԿԾ-ների համեմատական վերլուծության/բենչմարքինգի իրականացումը և դրանց համապատասխանեցումը ոլորտի առաջավոր բուհերի ծրագրերին, բուհի նյութատեխնիկական հենքի ամրապնդումը՝ լաբորատորիաների, կլինիկաների, ուսումնառողների մոտ համալսարանի ուղղվածությանը համապատասխան՝ գործնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորը և ամբողջական

ձևավորումը, գործատուների, աշխատաշուկայի կարիքների վերհանումը և դրանց վերլուծությունը՝ համապատասխան եզրահանգումները կրթության որակի ամրապնդմանը ծառայեցնելու միտումով, ուսանողական ինքնակառավարման կառույցների գործունեության ակտիվացումը, համալսարանի հասարակական պատասխանատվության բարձրացումը, որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը՝ այն համալսարանի բոլոր ստորաբաժանումների գործունեության առանցքը դարձնելու իմաստով:

Կատարվել են ուսումնառողների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնաօժանդակ աշխատակազմի կարիքների վերհանումը, շրջանավարտների կարծիքների ուսումնասիրություններ, որոնց հետևանքով պրակտիկայի հնարավորություն ենք տվել նաև 1-ին կուրսերին:

2019-2024թթ. Ռազմավարական ծրագրին համապատասխան՝ ամրապնդվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել գույք և սարքավորումներ, գրադարանն անընդհատ համալրվել է հատկապես մասնագիտական նոր գրականությամբ (հայերեն, անգլերեն և այլ լեզուներով), բարելավվել է որակի ներքին ապահովման համակարգը (մշակվել են նոր և փոփոխվել գործող կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, կրթական ծրագրեր), ՊԴ կազմը համալրվել է նոր մասնագետներով, հետազոտողի կրթական ծրագրերում կատարվել են ընդունելություններ, ուսումնասիրվել են ուսանողների կարիքները, ամրապնդման աշխատանքներ են տարվել համալսարանի արտաքին և հասարակայնության հետ կապերի ոլորտում:

«Ուրարտու» համալսարանը ձգտում է համաքայլ ընթանալ ՀՀ կրթական ոլորտում կատարվող բարեփոխումներին՝ մշտապես կատարելագործելով կառավարման և վարչարարության մոտեցումները, մատուցվող կրթական ծառայությունների որակը, ուսումնասիրելով շահակիցների և աշխատաշուկայի կարիքները, մշակելով և իրականացնելով առկա մարտահրավերների հաղթահարման ծրագրեր:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի առաքելությունն է՝ **հոգեբանության և սոցիալական աշխատանքի ոլորտներում պատրաստել աշխատաշուկայի կարիքներին և արդի գիտական նվաճումներին համահունչ որակյալ մասնագետներ՝ նպաստելով մարդու հոգեկան առողջության պահպանմանն ու շարունակական զարգացմանը:**

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Համալսարանն իր առաքելությունն իրագործելիս առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

1.*Ուսանողակենտրոն կրթություն.*

Համալսարանը կարևորում է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների ու հայցորդների ձեռքբերումները կրթության և հետազոտությունների ոլորտներում, նպաստում նրանց ինքնուրույն մտածողության, հետազոտական-ստեղծագործական ունակությունների ձևավորմանը և զարգացմանը՝ հոգ տանելով ակադեմիական և ուսումնաօժանդակ ծառայությունների արդյունավետ գործունեության մասին:

2.*Ժողովրդավարություն.*

ԲՈՒՀ-ի զարգացման հարցերին վերաբերող որոշումներն ընդունվում են՝ հաշվի առնելով ուսումնառողների և պրոֆեսորադասախոսական կազմի կարծիքները:

3.Բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմ.

ԲՈՒՀ-ի հաջողության կարևոր գրավականներից և երաշխիքներից է որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը և մշտական համալրումը նոր, պրոֆեսիոնալ, երիտասարդ կադրերով:

4.Ակադեմիական ազնվություն.

Համալսարանը կարևորում է գրագողության, կոռուպցիայի, գաղտնի համաձայնության, վստահության չարաշահման և այլ արատավոր երևույթների դեմ պայքարը:

5.Մրցունակություն.

Համալսարանը կարևորում է շրջանավարտների մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում:

6.Սոցիալական պատասխանատվություն.

Համալսարանը ստանձնում է պատասխանատվություն միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ մասնագետներ պատրաստելու համար:

7.*Մատչելի կրթություն.*

Համալսարանը կարևորում է կրթության մատչելիությունը յուրաքանչյուր սոցիալական շերտում գտնվող անհատի համար՝ հնարավորինս տրամադրելով ֆինանսական տարատեսակ աջակցություններ:

8.*Մասնագիտական վարպետություն.*

Համալսարանը հատուկ ուշադրություն է սևեռում շրջանավարտների գործնական, կիրառական կարողությունների և հմտությունների ապահովման վրա:

9. Մարդու արժանապատվության հարգանք.

Համալսարանը հոգ է տանում մարդու իրավունքների պահպանման և ամրապնդման, էթիկայի կանոնների պատշաճ կիրառման մասին:

10. Ակադեմիական ազատություն.

Համալսարանում խրախուսվում են ակադեմիական ազատությունը, նախաձեռնողականությունը, նորարարությունը:

11. *Նվիրվածություն.*

Համալսարանի շահակիցները ցուցաբերում են կորպորատիվ նվիրվածություն, գնահատում և հպարտանում են սեփական հաստատության ձեռքբերումներով, նպաստում բուհի հետագա առաջընթացին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

- ✓ Հաշվետվողականություն, թափանցիկություն՝ համալսարանի գործունեությունը բաց է, թափանցիկ, հրապարակային,
- ✓ Որակի հարաճուն բարելավում՝ փոփոխվող իրականության պահանջներին համապատասխան :

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Ուրարտու» համալսարանը ձգտում է դառնալ ճանաչելի և առաջատար կրթական և գիտահետազոտական կենտրոն, որը պատրաստում է բարձր որակավորում ունեցող մասնագետներ հոգեբանության, սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիայի ոլորտներում՝ ի նպաստ հոգեկան առողջության, սոցիալական արդարության և հասարակական զարգացման ամրապնդմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- դառնալ ՀՀ-ում և տարածաշրջանում առաջավոր բուհերից մեկը,
- պատրաստել աշխատաշուկայում մրցունակ՝ միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներ բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի կրթական ծրագրերով,
- ձևավորել համակողմանի զարգացած մարդասիրության և ժողովրդավարության գաղափարներով օժտված քաղաքացի,
- նպաստել բնակչության հոգեկան առողջության և տոկունության բարձրացմանը,
- խթանել հետազոտական և ստեղծագործական միտքը՝ ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառմամբ,
- ընդլայնել և խորացնել առաջադեմ գիտական ու կրթական հաստատությունների հետ համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում,
- հնարավորություն ստեղծել հասարակության կարիքավոր և խոցելի խմբերի կրթության համար:

ՆՊԱՏԱԿ 1: ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔ՝ Որակյալ կրթության իրականացման ապահովում, փոխակերպվող հասարակության հոգեբանական հավասարակշռության ու հոգեկան առողջության խնդիրների լուծմանը համապատասխանող, նորարական գիտական մտածողությամբ օժտված որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստում

1. Կրթության որակի բարձրացում և կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում

2. ՄԿԾ-ներում՝ սովորողների գնահատման ու նորարարական կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացների ներդնում

3. Դպրոց-բուհ, դիմորդ-բուհ կապերի ապահովում

4. Դասավանդման, ուսումնառության գործընթացների բարելավում

5. Էլեկտրոնային գրադարանի շարունակական բարելավում

6. Ոչ ֆորմալ և շարունակական կրթության համակարգի կատարելագործում

7. Սովորողների և շրջանավարտների ակտիվ կապի ապահովում

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ
1. Վերանայել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման, կազմակերպման և իրականացման փաստաթղթերը
2. իրականացնել հետազոտություններ և ապահովել առարկայական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի և գործատուների առանձնահատուկ պահանջներին
3. Կատարել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մշտադիտարկում և գնահատման արդյունքների հիման վրա արդիականացնել դրանց բովանդակությունը, կառուցվածքը և կրեդիտների հաշվարկման մեխանիզմները
4. Միջազգային բուհերի հետ առարկայացանկերի բենչմարքինգի վերլուծության արդյունքներով անհրաժեշտ առարկաների ներդնում
5. Մշակել և հրապարակել ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար
6. Անցկացնել մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ դպրոցի 12-րդ դասարանցիների և քոլեջի ավարտական կուրսի ուսանողների հետ
7. Զարգացնել հեռավար կրթության կազմակերպման և իրականացման ձևերը, բարելավել էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա ուսումնամեթոդական նյութերը և համալրել նոր նյութերով
8. Ապահովել յուրաքանչյուր դասախոսի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների առկայությունն ամբիոնում՝ ուսումնառողների կողմից դրանց ազատ օգտագործման հնարավորությամբ

9. Ուսումնառողների և դասավանդողների կարիքների պարբերական ուսումնասիրությունների իրականացում
10. Իրականացնել յուրաքանչյուր կիսամյակի ուսանողների առաջընթացի գնահատում
11. Անապահով և սոցիալական աջակցության կարիք ունեցող գերազանց սովորող ուսանողների խրախուսում
12. Կազմակերպել պրակտիկայի արդյունքների քննարկման հանդիպումներ
13. Թվայնացնել գրադարանում ավելացվող գրքերը՝ էլեկտրոնային կատալոգի տեսքով
14. Ներդնել գրադարանի ակտիվ շահառուներին խրախուսելու մեխանիզմ
15. Կազմակերպել կրթական լրացուցիչ ծրագրեր և դասընթացներ, մասնագիտական տարատեսակ վերապատրաստումներ
16. Կարճաժամկետ (մինչև 6 ամսյա) ուսուցողական հատուկ մասնագիտական ուղղվածության ծրագրերի մշակում և ներդրում ոչ ավանդական ուսանողների համար՝ բանակի սպաներ, դպրոցի ուսուցիչներ, դպրոցի, քոլեջների տնօրեններ, սպասարկման տարբեր ոլորտների աշխատողներ
17. Կազմակերպել ուսումնական և աշխատաշուկայի պահանջների, նորարարությունների քննարկումներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ
1. Վերանայված և հաստատված բալավրի 1 և մագիստրոսի 1 ՄԿԾ-ներ
2. Ամենամյա ուսումնասիրությունների առկայություն՝ աշխատաշուկայի պահանջների, շրջանավարտների ունեցած դերի մասին
3. Մշտադիտարկված բալավրի 2 և մագիստրոսի 1 ՄԿԾ-ներ
4. Նոր առարկաների դասավանդման փաթեթների առկայություն: Դասընթացների դասավանդում
5. Ուսանողների և դիմորդների համար մշակված ուղեցույցներ
6. Քոլեջներից և դպրոցներից դիմորդների ամենամյա 5% աճ
7. Հեռակա ուսուցմամբ ուսանողների ակտիվության ապահովում
8. Ամբիոններում առարկայական փաթեթների էլեկտրոնային տարբերակների առկայություն
9. Հաճախակի բացակայող՝ աշխատանքի բերումով՝ ուսանողներին հեռավար ակտիվ ներգրավում դասապրոցեսներին:
10. Հարցումների և վերլուծությունների առկայություն
11. Ուսանողների կիսամյակային առաջընթացի հաշվետվության առկայություն
12. Ամենամյա ուսումնական վարձավճարի զեղչեր 5% ուսանողների համար
13. Կազմակերպված տարեկան 1 քննարկում
14. Թվայնացված կատալոգի ընդլայնում

15. «Գրադարանի լավագույն բարեկամը» խրախուսման ներդնում
16. Կազմակերպված տարեկան 5 դասընթացներ և թրեյնինգներ 17. Վերապատրաստված անձանց առկայություն՝ ուսանողներ, տնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ, դաստիարակներ
18. Ներդրված ծրագիր
19. Կազմակերպված տարեկան 2 քննարկումներ

ՆՊԱՏԱԿ 2: ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔ՝ **Հետազոտական և ստեղծագործական գործունեության կրթական գործընթացում ներդնելու գործընթացի խթանում, ՀՀ և արտերկրի առաջավոր գիտական կենտրոնների հետ համագործակցային-գործընկերային կապերի զարգացում**

1. Հաշվի առնելով ոլորտի մարտահրավերներն ու միտումները՝ երկրի կարիքներին և զարգացման ծրագրերին համահունչ գիտական հետազոտությունների ընդլայնում

2. Բուհի հետազոտական աշխատանքների արդյունքների ու ազդեցությունների վերաբերյալ հանրության ու գիտական աշխարհի իրազեկման աշխատանքների իրականացման բարելավում

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ
1. Վերանայել հետազոտական և խորհրդատվական աշխատանքների զարգացման առաջնային ուղղությունները՝ դրանք համապատասխանեցնելով հոգեբանության և սոցիոլոգիայի արդիականացման և նորարարական հեռանկարներին
2. Գիտական, հետազոտական աշխատանքներում ուսանողերին ներգրավելու մեխանիզմների կիրառում
3. Ասպիրանտական հետազոտական աշխատանքներն ուղարկել համապատասխան ֆակուլտետներ ունեցող այլ բուհերի գրադարաններին, ամբիոններին
4. «Տարվա հետազոտություն» անվանակարգով սահմանել ամենամյա մրցանակ
5. Խրախուսել միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում ՊԴ կազմի անդամների հրապարակումները և օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին նրանց մասնակցությանը
6. Կազմակերպել ներբուհական, համապետական, միջազգային գիտաժողովներ և գիտական սեմինարներ
7. Խրախուսել հետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքի ձևավորումը և դրանց ուսուցման գործընթացում կիրառումը
8. Կապեր հաստատել տեղական և միջազգային գրադարանների հետ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ
1. Հաստատված հետազոտական և խորհրդատվական հոգեբանական ու սոցիոլոգիական աշխատանքների թեմաներ
2. Գիտական պարբերականներում տպագրված դասախոս-ուսանող , ուսանողի գիտական հոդվածների թվի աճ՝ 35%
3. Ասպիրանտական տպագրված հետազոտությունների թվաքանակի ամենամյա աճ: 4. Այլ բուհերում այդ աշխատանքների առկայություն
5. «Տարվա հետազոտություն» մրցանակակրի առկայություն
6. Միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում ՊԴ կազմի 35 % անդամների հրապարակումներ 7. արտասահմանյան գիտաժողովներին մասնակից ՊԴ անդամներ՝ 20% յուրաքանչյուր ամբիոնից
8. Կազմակերպված տարեկան ներբուհական՝ 2, համապետական՝ 1, միջազգային ՝1 ամենամյա գիտաժողովներ 9. գիտական սեմինարների թվի աճ
10. Բուհի ՊԴ և ուսանողական կազմի հետազոտական աշխատանքների թվաքանակի ամենամյա աճ 11. դասավանդվող առարկաների գրականության ցանկում ներառված համալսարանական հետազոտությունների՝ 50%
12. Գրադարանների հետ առկա գործուն 2 հուշագրեր

ՆՊԱՏԱԿ 3: *ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԱՐԴՅՈՒՆՔ՝ Կատարելագործել բուհի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և որակի մշտադիտարկումը

1. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ինքնավարության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

2. Բուհի վարչական, ՊԴ կազմի կարողությունների, հմտությունների մակարդակի բարձրացման ապահովում

3. Անձնակազմի բարձր որակավորում ունեցող կադրերով համալրման շարունակականության ապահովում

4. Ապահովել ուսուցողական հետազոտական նյութերի և գործիքների քանակի ու արդյունավետության բարձրացումը

5. Բուհի ֆինանսական հոսքերի աղբյուրների բազմազանեցում

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ

1.	Ներքին իրավական ակտերի արդիականացում
2.	Ամենամյա SWOT վերլուծության արդյունքների հավաքագրում և բուհի կառավարման արդյունավետության և որակի քննարկում
3.	Կազմակերպել աշխատաժողովներ՝ նվիրված կրթության որակի ապահովման և բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնահարցերին
4.	Ապահովել դասախոսների գիտական աստիճանի բարձրացմանն անհրաժեշտ պայմաններ
5.	Ներդնել կրթագիտական ակտիվության խրախուսման մեխանիզմ
6.	Ապահովել ասպիրանտուրան ավարտած մեր ուսանողներին աշխատանքով՝ որպես գիտ. աշխատող և դասավանդող անձնակազմ
7.	Ուսումնական գործընթացում ներգրավել առաջատար տեղական և արտերկրյա համալսարանների դասախոսներ
8.	ժամանակակից մասնագիտական գրականությամբ համալրել բուհի գրադարանը (հայերեն և օտար լեզուներով)
9.	Հոգեբանական-խորհրդատվական կենտրոնը համալրել հոգեախտորոշիչ սարքավորումներով
10.	Հիմնել և շնորհել նոր անվանական կրթաթոշակներ
11.	Ակտիվացնել բուհի մասնակցությունը հանրային ծառայությունների ոլորտում հայտարարվող դրամաշնորհային ծրագրերին

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ
1.	Կառավարման բոլոր օղակներում, բուհի բոլոր ստորաբաժանումներում որակի ապահովման պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում (ՊԻՍԲ) շրջափուլով առաջնորդվելու մեխանիզմի ներդրում
2.	SWOT վերլուծության առկայություն՝ բացահայտված խնդիրների հաղթահարմանն ուղղված առաջարկություններ՝ միտված միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններում դրանց ներառմանը:
3.	Բուհի ՊԴ, ուսանողական և վարչական անձնակազմի ներգրավում՝ որպես որակի ապահովման աջակիցների
4.	Գիտական աստիճանների բարձրացմամբ ՊԴ կազմի թվի աճ 25 %
5.	Հաստատված խրախուսման կարգ
6.	Տարեկան խրախուսումներ՝ յուրաքանչյուր ամբիոնից առնվազն մեկ դասախոս
7.	ՊԴ կազմի 40% երիտասարդացում և 20% բուհի շրջանավարտների ընդգրկում ՊԴ կազմ
8.	Տեղական և արտերկրյա համալսարաններից և աշխատաշուկայից ներգրավված դասախոսների թվի աճ՝ 15%
9.	Համալրված գրականության ցանկ

10. Սարքավորումների առկայություն և դրանցով իրականացված տվյալների առկայություն համալսարանի գիտահետազոտությունների մեջ
11. Անվանական կրթաթոշակի առկայություն
12. Դրամաշնորհային ծրագրի առկայություն

ՆՊԱՏԱԿ 4: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔ՝ Բարձրագույն կրթության միջազգային տարածքների ինտեգրման գործընթացներին բուհի շարունակական ակտիվ մասնակցություն, միջազգային մասնագետների ներուժի ներգրավում կրթական ծրագրերում, օտարերկրացի և սփյուռքահայ սովորողների թվաքանակի աճ:

1. Միջազգային ակադեմիական և ոչ ակադեմիական կառույցներին անդամակցության/ համագործակցության ընդլայնում

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավվածության ընդլայնում և գրավիչ գիտակրթական միջավայրի ապահովում

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ
1. Արդիականացնել բուհի միջազգայնացման քաղաքականությունը և ընթացակարգերը
2. Մասնակցել միջազգային գիտակրթական ծրագրերին և միջոցառումներին
3. Կնքել համագործակցության նոր պայմանագրեր օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ՝ բուհի գերակա ուղղություններով
4. Խթանել օտարերկրացի, ինչպես նաև սփյուռքահայ սովորողների ներհոսքը
5. Օտարերկրացի ուսանողների համար մշակել և ներդնել օտար լեզվով դասընթացներ և/կամ մոդուլներ
6. Միջազգային փորձառու մասնագետների ներգրավել կրթական և գիտական գործընթացներում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ
1. Հաստատված միջազգայնացման քաղաքականություն
2. Գիտակրթական ծրագրերին և միջոցառումներին բուհից մասնակցություն
3. Նոր 2 պայմանագրերի առկայություն 4. Համագործակցային աշխատանքների ակտիվություն
5. Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների թվաքանակի աճ
6. Օտար լեզվով դասավանդվող դասընթացների առկայություն
7. Դասավանդման, ՄԿԾ-ների վերանայման աշխատանքներում միջազգային մասնագետներ ներգրավված կազմի թվաքանակի աճ 15 % չափով

ՆՊԱՏԱԿ 5: ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔ՝ Բուհի ճանաչելիության բարձր մակարդակի, հասարակության ներգրավվածության բարելավում:

1. Սովորողների և ՊԴ կազմի հասարակական ակտիվության խրախուսում
2. Արտաքին շահակիցների հետ կապի ամրապնդման մեխանիզմների զարգացում
3. Բուհի վարկանիշի ու ճանաչելիության շարունակական բարձրացման ապահովում

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ
1. Ապահովել հասարակական գործընթացներում բուհի ներկայացվածությունը՝ ուսանողների կամ ՊԴ կազմի միջոցով
2. իրականացնել ներբուհական ծրագրեր հանրապետության ուսումնական հաստատությունների սովորողների և շրջանավարտների համար՝ ծանոթացնելով նրանց ամբիոնների աշխատանքին, առաջարկվող մասնագիտություններին
3. Կազմակերպել աշխատաժողովներ՝ գործատուների, բուհի շրջանավարտների մասնակցությամբ
4. Հասարակությանը մասնագիտական, կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցում
5. Կնքել համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Երևանի և ՀՀ մարզերի ավագ ու հիմնական դպրոցների, ինչպես նաև թիրախավորված ուսումնական այլ հաստատությունների հետ
6. Համալսարանի պաշտոնական կայքի անընդհատ թարմացում և սոցիալական մեդիայի հնարավորությունների լայն օգտագործում:

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ
1.	Ամենամյա խրախուսված ուսանողներ և դասախոսներ
2.	Իրականացված ամենամյա 1 հանդիպում
3.	Կազմակերպված տարեկան թվով 2 աշխատաժողով, քննարկումներ
4.	Ուսումնական այլ հաստատություններ և փոխադարձ այցերի թվաքանակի աճ
5.	Պրակտիկաների անցկացման վայրերի թվաքանակի աճ
6.	Համացանցային նյութերի քանակի, դիտումների 20 % աճ